

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

[Ամսաթիվ, N...]

ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021-2030
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ «ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածը և Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 8-րդ մասերը՝ **Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.**

1. Հաստատել Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները» համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Ն. Փաշինյան

[ամսաթիվ]

**ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021-2030
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ «ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**

1. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիան (ԿՓՇԿ) 1993թ. մայիսին: 2002թ. դեկտեմբերին Հայաստանը վավերացրել է Կիոտոյի արձանագրությունը, իսկ 2017թ. փետրվարին՝ վավերացրել է Կիոտոյի արձանագրության Դոհայի փոփոխությունը և Փարիզյան համաձայնագիրը: 2019թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Մոնրեալի արձանագրության Կիզալիի փոփոխությունը՝ ստանձնելով փուլային եղանակով հիդրոֆտորածխածիններից (ՀՖԱ) հրաժարման ուղղությամբ հանձնառություն¹: Հայաստանը հավատարիմ է մնում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման բազմակողմ գործընթացին:
2. Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ ԿՓՇԿ քարտուղարությանը ներկայացրել է իր Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումները (ԱՄՆԳ, INDC) 2015 թ. սեպտեմբերին: ԱՄՆԳ-ի նախապատրաստական փուլը տևել է 2015-2019թթ., որին հետևեց 2020թ. հաջորդ փուլը՝ մինչև 2050թ. ընկած ժամանակահատվածի համար:
3. 2017 թ. փետրվարին Փարիզյան համաձայնագրի վավերացմամբ Հայաստանի ԱՄՆԳ-ն դարձավ Ազգային մակարդակով սահմանված գործողություններ/ներդրումներ (ԱՍԳ) 2015-2050 թթ. ժամանակահատվածի համար:
4. Հայաստանի Հանրապետությունը զարգացող երկիր է և, որպես ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Կողմ հանդիսացող զարգացող երկիր, ընդգրկված չէ Կոնվենցիայի I-ին Հավելվածում: Փարիզյան համաձայնագրի Հոդված 4-ի կետ 4-ով նախատեսվում է, որ զարգացած երկրներ հանդիսացող Կողմերը պետք է շարունակեն առաջնորդող դեր ունենալ՝ ստանձնելով տնտեսության բոլոր ուղղություններով արտանետումների բացարձակ կրճատման թիրախներ, և որ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերը պետք է շարունակեն ընդլայնել կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանն ուղղված իրենց գործողությունները, ինչպես նաև խրախուսվում են ժամանակի ընթացքում տնտեսության բոլոր ոլորտներում արտանետումների կրճատման կամ նվազեցման թիրախների իրագործման ուղղությամբ ջանքերը՝ հաշվի առնելով ազգային պայմանները:
5. 2015թ. իր ԱՄՆԳ-ով Հայաստանը պարտավորություն է ստանձնել հետամուտ լինելու տնտեսության բոլոր ոլորտներում մեղմման միջոցառումների ձեռնարկմանը՝ ձգտելով 2050թ. հասնել մեկ շնչի հաշվով զուտ արտանետումների 2.07 տ CO₂ ^{hmf} ցուցանիշի՝ ֆինանսական,

¹ Կիզալիի փոփոխության կողմ չհանդիսացող երկրներից Հայաստանի Հանրապետություն ՀՖԱ-ների ներմուծման, այդ երկրներ արտահանման, ինչպես նաև այդ երկրներ Հայաստանի Հանրապետության տարածքով ՀՖԱ-ների տարանցիկ փոխանցման արգելքը կգործի 2033 թվականից:

տեխնոլոգիական և կարողությունների զարգացմանն ուղղված միջազգային բավականաչափ աջակցության առկայության դեպքում:

6. Մինչև ընթացիկ դարակեսը Հայաստանը կրկնապատկելու է վերականգնվող էներգիայի արտադրության մասնաբաժինը, որպեսզի ընթացիկ դարի երկրորդ կեսին հասնի էներգիայի զրոյական ածխածնային արտադրության:
7. Հայաստանը դեպի ծով ելք չունեցող, խոցելի լեռնային էկոհամակարգերով երկիր է, որն արդեն իսկ ենթարկվում է կլիմայի փոփոխության և ջրի սակավության բացասական ազդեցությանը: Հետևաբար, հարմարվողականության քաղաքականությունը և միջոցառումները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի սոցիալական և տնտեսական զարգացման նպատակներին հասնելու կարողության համար:
8. Մույն փաստաթղթով վերանայվել է 2015 թ. ներկայացված ԱՄՆԳ-ն՝ համաձայն Կոնվենցիայի թիվ 4/CMA.1, թիվ 9/CMA.1 և թիվ 18/CMA.1 որոշումներով սահմանված ցուցումների: Այն պարունակում է մինչև 2030թ. արտանետումների նպատակադրված սահմանափակման և ԱՄԳ շրջանակներում ձեռնարկվելիք հարմարվողականության միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև «գործողություններ և աջակցություն» մասով նախնական տեղեկատվություն:
9. ԱՄԳ-ն հիմնված է կանաչ տնտեսություն սկզբունքի վրա և համատեղելի է Կայուն Ջարգացման Նպատակների հետ, որոնք արտացոլված են Հայաստանի Հանրապետության սոցիալական և տնտեսական զարգացման նպատակներում:
10. Վերանայված ԱՄԳ-ով Հայաստանի Հանրապետությունը որդեգրում է ԱՄԳ իրականացման տասնամյա ժամանակահատված (2021-2030թթ.) ՝ ի տարբերություն իր ԱՄՆԳ-ի, որով առաջարկվում էր 2015-2050թթ. ժամանակահատվածը: Հայաստանը պահպանում է մինչև 2050 թ. մեղմման իր նպատակը՝ ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումները նվազեցնել առավելագույնը 2.07 տ CO_2 համ. մեկ շնչի հաշվով, որը կարտահայտվի իր երկարաժամկետ, ցածր արտանետումներով զարգացման ռազմավարությունում (ԵԺՌ-ՑԱԶՌ): Մինչև 2030թ. իրագործման ենթակա մեղմման նոր նպատակը համարժեք է 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ 40 տոկոսով նվազեցման:

1.	Հղումային տարի	1990թ.
2.	Հղումային ցուցանիշների վերաբերյալ քանակական տեղեկություններ	<ul style="list-style-type: none"> • Մինչև 2030թ. 40 տոկոսային նվազեցում՝ 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ • Ընդամենը ՋԳ արտանետումները 1990թ.՝ 25,855, Գգ CO₂համ. • Զուտ ՋԳ արտանետումներ 1990թ.՝ 25,118 Գգ CO₂ համ. (ԱԿՀ 1990–2017թթ.)
3.	Հղումային ելակետերը չափելու համար օգտագործված տվյալների աղբյուրները	<ul style="list-style-type: none"> • Պատմական տվյալները մեջբերված են Հայաստանի Հանրապետության 1990-2017թթ. «Ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվությունից», Երևան, 2020թ., Ազգային կադաստրի հաշվետվություն (ԱԿՀ) 2017 թ. • 2030թ. արտանետումների թիրախի հաշվարկների հիմքում ընկած են <ul style="list-style-type: none"> - 1990-2017թ. ՋԳ գույքագրման տվյալները, - «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչև 2040թ.)», որը նախատեսում է վերականգնվող էներգետիկայի ավելի հավակնոտ զարգացում և Հայկական ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի հետագա երկարաձգում: Նոր ռազմավարությամբ սահմանված միջոցառումներն առաջնահերթ են համարվել 2019թ. ընդունված ՀՀ կառավարության ծրագրում՝ հիմնավորելով էներգետիկայի ոլորտում ՋԳ արտանետումների կանխատեսումները: - «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում», «Գյուղատնտեսություն» և «Թափոններ» սեկտորների համար սահմանված արտանետումների թիրախները հիմնված են 4-րդ ազգային հաղորդակցության մեջ ներկայացված կանխատեսումների և ենթադրությունների վրա:
4.	Հանգամանքները, որոնց ներքո Հայաստանի Հանրապետությունը կարող է թարմացնել հղումային ցուցանիշների մեծությունները	<p>Օգտագործված ցուցանիշների մեծությունները կարող են թարմացվել ՋԳ գույքագրման ազգային կադաստրի հետագա բարելավման արդյունքում, մասնավորապես՝ տարբեր ենթակատեգորիաների համար ավելի բարձր կարգի գնահատման մոտեցումների կիրառման, նոր ենթակատեգորիաների դիտարկման, տվյալների ճշգրտության բարելավման, երկրին բնորոշ արտանետումների գործակիցների վերանայման և ինչպես նաև բարելավումներ բխող ՋԳ ազգային կադաստրի հաշվետվությունների տեխնիկական վերլուծության շրջանակներում բացահայտված կարիքների:</p>

ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ/ՎԱՍ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԸ

5.	Ժամկետը	2021թ. հունվարի 1 – 2030թ. դեկտեմբերի 31
6.	Թիրախների քանակը	Մեկ տարվա թիրախ (2030թ.)

ՈԼՈՐՏԸ ԵՎ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

7.	Թիրախի ընդհանուր նկարագրությունը	Տնտեսության բոլոր ոլորտներ
8.	ՋԳ ընդգրկումը	<ol style="list-style-type: none"> 1. Ածխածնի երկօքսիդ (CO₂) 2. Մեթան (CH₄) 3. Ազոտի ենթօքսիդ (N₂O) 4. F-գազեր (HFCs, SF₆) <p>Այս գազերը ներառված են Ջերմոցային գազերի ազգային կադաստրում:</p>
9.	Ոլորտների ընդգրկումը	<p>Մեղմման գործողություններում ընդգրկված ոլորտները.</p> <p>ա. Էներգետիկա (ներառյալ էներգիայի արտադրություն և սպառում)</p> <p>բ. Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում (հանքային արդյունաբերություն և F-գազեր)</p> <p>գ. Գյուղատնտեսություն (աղիքային խմորում, ուղղակի և անուղղակի N₂O արտանետումներ կառավարվող հողերից)</p> <p>դ. Թափոններ (կոշտ թափոնների կառավարում, կեղտաջրեր)</p> <p>ե. Անտառային տնտեսություն (անտառապատում, անտառների պահպանություն) և այլ հողօգտագործում:</p>

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

10.	Պլանավորման գործընթացները և իրականացման պլանները	<p>Պլանավորման գործընթացները.</p> <ul style="list-style-type: none"> • ԱՄԳ-ի մշակման և դրա մշտադիտարկման համակարգման աշխատանքները իրականացվում են Կլիմայի փոփոխության միջգերատեսչական համակարգող խորհրդի կողմից: Խորհուրդը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012թ. հոկտեմբերի 2-ի թիվ 955 որոշմամբ: Խորհուրդը բաղկացած է 10 նախարարությունների, կառավարությանը կից երեք պետական գործակալությունների և երկու անկախ մարմինների, այն է՝ Հանրային
-----	--	--

		<p>ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Վիճակագրության կոմիտեի ներկայացուցիչներից:</p> <ul style="list-style-type: none"> • ԱՄԳ-ի վերանայման ուղղությամբ հանրային խորհրդակցությունների գործընթացն իրականացվել է կառավարության ընթացակարգերին համապատասխան, ներառյալ՝ գենդեր-պատասխանատու մոտեցմամբ քաղաքացիական հասարակության ներգրավմամբ, որին հաջորդել են խորհրդարանական քննարկումները: <p>Պլանավորման գործընթացներում հաշվի են առնվել հետևյալ ազգային պայմանները.</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանում ՋԳ արտանետումների հիմնական աղբյուրը էներգետիկայի սեկտորն է (էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրություն, այլ ստացիոնար և շարժական այրման աղբյուրներ, ներառյալ տրանսպորտը և բնակելի սեկտորը, ինչպես նաև բնական գազի փախուստային արտանետումները): 2018թ. ՀՀ-ում առաջնային էներգիայի ընդհանուր մատակարարումը կազմել է 3.15 միլիոն տ ն.հ. կամ 1.1 տ ն.հ./մեկ շնչի հաշվով; • Հայաստանը գործնականում չունի հանածո վառելիքի ներքին ռեսուրսներ և մեծապես կախված է հանածո վառելիքի ներմուծումից: 2018թ. առաջնային էներգիայի ընդհանուր մատակարարման 28.4% ապահովվել է ներքին ռեսուրսներով՝ միջուկային էներգիա, հիդրոէներգիա, բիովառելիք և փոքր մասնաբաժնով՝ արևի և քամու էներգիա: 2018թ. Հայաստանի առաջնային էներգիայի ընդհանուր մատակարարման 64.9%-ը (2.04 մլն տ ն.հ.) բաժին է ընկնում բնական գազին, որին հաջորդում է նավթամթերքները՝ 10.2% (0.3 միլիոն տ ն.հ.): Էներգաարդյունավետությունը, էներգախնայողությունը և վերականգնվող էներգիայի զարգացումը առաջնահերթ են երկրի էներգետիկ անվտանգության տեսանկյունից, և ցածր ածխածնային զարգացման հիմնական շարժիչներն են: • 2018թ. Հայաստանը արտադրել է 0.67 մլն տ ն.հ. էլեկտրաէներգիա, որից 43.3%-ը՝ բնական գազով աշխատող ջերմաէլեկտրակայաններից, 29.8%-ը՝ հիդրոէլեկտրակայաններից, 26.6%-ը՝ ատոմակայանից, իսկ 0.3%-ը՝ քամու և արևի կայաններից: Հայաստանը 1990թ. ի վեր, փուլային կարգով՝ աստիճանաբար և ամբողջովին, հրաժարվել է էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում մագուրթի գործածությունից: Հայաստանի կառավարությունը չի սուբսիդավորում հանածո վառելիքի օգտագործումը: • 2018թ. էներգիայի ընդհանուր վերջնական սպառումը կազմել է 2.15 մլն տ ն.հ.: Վերջնական էներգիայի ամենամեծ
--	--	---

		<p>սպառումը բաժին է ընկնում տնային տնտեսություններին՝ 33.1%, էներգիայի սպառման երկրորդ խոշորագույն ոլորտը տրանսպորտն է՝ 33.0%:</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանը փոքր, դեպի ծով ելք չունեցող երկիր է, որին բաժին է ընկնում ՋԳ գլոբալ արտանետումների 0.02%-ը: 2017թ. ընդհանուր ՋԳ արտանետումները կազմել են 10,624 Գգ CO₂համ., իսկ ՋԳ զուտ արտանետումները կազմել են 10,180 Գգ CO₂ համ. (ԱԿՀ 2017): • Հայաստանը միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր է, փոքրաթիվ ազգաբնակչությամբ. այնուամենայնիվ Հայաստանը հանձն է առնում իր պատասխանատվությունը և պատրաստակամ է ներդնել գործողությունների իր արդարացի մասնաբաժինը արտանետումների կրճատման ուղղությամբ: Համաձայն 2017-2018թթ. «Talanoo» երկխոսության արդյունքների՝ Հայաստանը պատրաստ է բարձրացնել իր հավակնությունները, և ժամանակի ընթացքում հասնել կլիմայական չեզոք ռեժիմի՝ միջազգային դոնորների աջակցությամբ: • Երկարաժամկետ մինչև 2050թ. պլանավորումը իրագործվելու է որպես Հայաստանի երկարաժամկետ Ցածր արտանետումներով զարգացման ռազմավարության պատրաստման մի մաս, 2021թ. Կառավարության կողմից փաստաթուղթն ընդունելու հեռանկարով: Հայաստանն ակնկալում է բավարար ֆինանսական, տեխնոլոգիական և կարողությունների զարգացման աջակցություն՝ կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման և հարմարվողականության ապահովման ուղղությամբ: • Կառավարության կողմից ԱՍԳ-ի վերանայման ժամանակ հաշվի առնված առանցքային նկատառումներն են. ազգային տնտեսության աճի պահպանումը, աղքատության կրճատումը, շրջակա միջավայրի պահպանությունը, կայուն զարգացման նպատակների իրագործումը, մինևույն ժամանակ՝ ազգային էներգետիկ անվտանգության մեծացումը, ինչպես նաև՝ մատչելի և մաքուր էներգիայի մատակարարման ապահովումը: <p>Իրականացման ծրագրերը.</p> <p>2021-2030թթ. ԱՍԳ-ի իրականացումն ապահովում են ազգային և ոլորտային ռազմավարությունները և դրանց իրականացման ծրագրերը, մասնավորապես.</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը նախանշում է առավելապես տեղական էներգետիկ ռեսուրսների շահագործման ուղղված ծրագրերը՝ առանձնահատուկ
--	--	---

		<p>ուշադրություն դարձնելով վերականգնվող էներգիայի օգտագործմանը և էներգախնայողության խթանմանը:</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ կառավարության (2019թ.) ծրագրում առանձնահատուկ շեշտադրված են միջուկային էներգիայի, վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացման, էներգաարդյունավետ և նոր տեխնոլոգիաների ներդրման հիմնահարցերը՝ նպատակ ունենալով ապահովել երկրի էներգետիկ անվտանգությունը և մատչելի և հուսալի էներգիայի մատակարարումը, ինչպես նաև՝ կլիմայի փոփոխության արդյունքում ի հայտ եկող խնդիրների մեղմումը և կանխարգելումը՝ կատարելով միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները, կայուն քաղաքականության մշակումը և իրականացումը ուղղված կանաչ տնտեսության խթանման և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակների իրագործմանը: • ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզի դրույթները՝ կլիմայի փոփոխությանն առնչվող՝ 12 և էներգախնայողության, վերականգնվող էներգետիկայի և էներգետիկ անվտանգությանն առնչվող 34 գործողություններով: • «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040թ.)», որը երաշխավորում է էներգետիկ անվտանգության ազգային գերակայությունը՝ միջուկային էներգիայի, գազատուրբինային ժամանակակից կայանների, ինչպես նաև տնտեսապես կենսունակ և տեխնիկապես հասանելի վերականգնվող էներգիայի աղբյուրների, հիմնականում՝ արևային էներգիայի գործածության զարգացման և ընդլայնման հիման վրա: Մասնավորապես նախատեսվում է փոքր ՀԷԿ-երի հիմնական ներուժի գործադրումից հետո, ուշադրությունը սևեռել արևային և քամու էներգիայի աղբյուրներին՝ հզորացնելով արևային էներգիայի արտադրության իր կարողությունը ներկայիս 59.5 ՄՎտ-ից² մինչև 1000 ՄՎտ 2030թ., ընդլայնելով ինչպես կանաչ էներգիայի տեսակարար կշիռը, այնպես էլ էներգետիկ անվտանգությունը (առնվազն 15% 2030թ. էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում), • էներգետիկ արդյունավետության և վերականգնվող էներգետիկայի 2021-2030թթ. ազգային ծրագիրը, որով կսահմանվեն ոլորտային նոր թիրախներ:
--	--	---

² 2020թ. հուլիսի 1-ի դրությամբ

		<ul style="list-style-type: none"> • Տրանսպորտային ոլորտի ռազմավարություն. հասարակական տրանսպորտի արդյունավետության բարձրացում, վերականգնվող էներգիայի օգտագործում, էլեկտրական փոխադրամիջոցների գործածության ընդլայնման խթանում և աջակցություն: • Գյուղատնտեսության ոլորտի ռազմավարություն (2020-2030թթ.): Ազոտային պարարտանյութերի կառավարման բարելավում և օրգանական գյուղատնտեսության զարգացում, անասնաբուծության կայուն ինտենսիվացում ցեղատեսակների բարելավման միջոցով, ոռոգման համակարգերի բարելավում, թվային գյուղատնտեսության խթանում և տեխնոլոգիական նորարարությունների ներդրում: • Կոշտ թափոնների կառավարման համակարգի զարգացման 2017-2036թթ. ռազմավարություն: • Անտառի ազգային ծրագիր (2021թ.). անտառածածկի ավելացում՝ Հայաստանի տարածքի 12.9% չափով մինչև 2030թ.: Անտառային տնտեսության և գյուղատնտեսության ոլորտային քաղաքականությունները համապարփակ միջոցառումների միջոցով նպատակ ունեն ապահովելու հողերի բոլոր կատեգորիաներում օրգանական ածխածնի պահպանումը, կուտակումը և պահեստավորումը: Ձեռք բերված հաշվեկշիռը ներկայացվելու է ԱՍԳ-ում: • Ֆինանսավորում. ֆինանսավորման կարիքների գնահատումը 2021-2030թթ. ԱՍԳ իրագործման ազգային պլանի մաս է, որը մշակման ընթացքում է: • Հայաստանը ձգտում է մշակել «պարտք կլիմայի համար» նորարարական ֆինանսական փոխանակման մեխանիզմ, որի նպատակն է լրացուցիչ ֆինանսավորում ներգրավել կլիմայի փոփոխության հակազդման համար և որն առաջարկում է նորարարության կիրառում ոչ միայն «պարտք կլիմայի համար» գործարքի տեխնիկական համատեքստում, այլ նաև երկկողմ և բազմակողմ մակարդակով երկրների կողմից ստանձնած պարտավորությունների առաջնահերթության սահմանման և արժևորման մասով: • Նախարարությունները և պետական գերատեսչությունները, որոնք պատասխանատու են ոլորտային ռազմավարությունների իրականացման համար, հետևյալն են. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ
--	--	--

		<p>հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե:</p>
11.	<p>Կամավոր համագործակցություն Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածի ներքո</p>	<p>ԱՍԳ-ով ստանձնած հանձնառությունը իրագործվելու է ազգային մակարդակով իրականացվող գործողությունների միջոցով, թեև դոնորային աջակցությունը անխուսափելի անհրաժեշտություն է՝ այդ գործողությունների իրականացումն ապահովելու համար:</p> <p>Տեղական ուժերով իրականացվող մեղմման արդյունքներին նպաստելու և ավելի խթանելու նպատակով Հայաստանը մտադիր է մասնակցել Փարիզյան համաձայնագրի հոդված 6-ով սահմանված շուկայական և ոչ շուկայական մեխանիզմներին, ըստ Համաձայնագրի Կողմերի կողմից ընդունված համապատասխան դրույթների. Այն է՝ համագործակցային մոտեցումներում, որոնք այլ Կողմերին հնարավորություն են ընձեռում ԱՍԳ-ների համար օգտվել միջազգայնորեն փոխանցելի մեղմման արդյունքներից (ՄՓՄԱ)՝ համաձայն Փարիզյան համաձայնագրի 6.2 հոդվածի, նաև՝ ծրագրային մեխանիզմներում ըստ 6.4 հոդվածի, որոնք տրամադրում են մեղմման լրացուցիչ արդյունքներ աջակցելու այլ երկրների կողմից ԱՍԳ նպատակներին հասնելուն, ինչպես նաև՝ ոչ շուկայական մոտեցումներում ըստ Համաձայնագրի 6.8 հոդվածի: Հայաստանն արդեն իսկ համագործակցում է Եվրոպական Միության և վերջինիս անդամ երկրների հետ ազգային, տարածաշրջանի և միջազգային մակարդակներում միջոցառումների խթանման համար, ներառյալ կլիմայի փոփոխության հասցեագրման շուկայական և ոչ շուկայական մեխանիզմները³:</p>
<p>ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p>		
12.	<p>Կլիմայի փոփոխության հարմարվողակա-նություն</p>	<p>Պլանավորման գործընթացներում հաշվի են առնվել հետևյալ ազգային պայմանները.</p> <ol style="list-style-type: none"> 1. Հայաստանը դեպի ծով ելք չունեցող, լեռնային երկիր է, գտնվում է 375-4090 մետր բարձրության վրա: Երկրին բնորոշ են վեց կլիմայական գոտիներ՝ չոր մերձարևադարձային, կիսաանապատային, տափաստանային, անտառային, ալպյան և ցուրտ բարձրլեռնային: 2. Հայաստանի կլիման բավականին չոր է՝ տարեկան տեղումները կազմում են միջինում 592 մմ, որոշ շրջաններում՝ չոր, իսկ տեղումների առավելագույն

³ Սույն երկկողմ համագործակցության շրջանակը ուրվագծած է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ, CEPA) գրույթ IV-ում և Հավելված IV-ում:

		<p>մակարդակները դիտվում են լեռնային շրջաններում: 1935-2016թթ. ընկած ժամանակահատվածում ընդհանուր տեղումների քանակը նվազել է մոտ 9%-ով (1996թ. հետո նվազման տեմպերը շարունակ աճում են), ինչի արդյունքում առաջանում է գյուղատնտեսության ոլորտում հարմարվողականության համապատասխան միջոցառումների և ջրային ռեսուրսների ավելի լավ կառավարման անհրաժեշտություն:</p> <p>3. Օդի միջին ջերմաստիճանը 1961-1990թթ. միջինի նկատմամբ զգալիորեն աճել է. 1929-2012թթ. ընթացքում 1.03°C-ով, իսկ 1929-2016թթ. ընթացքում այդ աճը կազմել է 1.23°C:</p> <p>Հարմարվողականության հիմքերը և մոտեցումները</p> <p>1. Հարմարվողականության ռազմավարությունը և ներդրումները հիմնված են ՄԱԿ ԿՓՇԿ-ի «Նպատակ» 2-րդ հոդվածի պահանջի վրա, որով նախատեսվում է սահմանափակել կլիմայի փոփոխության ազդեցություններն այնպիսի ժամանակահատվածով, որը թույլ կտա ապահովել էկոհամակարգերի բնականոն հարմարեցումը կլիմայի փոփոխություններին: Այսպիսով, ԱՄԳ-ում էկոհամակարգերի բնականոն հարմարվողականության վրա հիմնված մոտեցումը առանցքային նշանակություն ունի Հայաստանի հարմարվողականության ռազմավարության և գործողությունների (ներդրումների) համատեքստում, և «Հարմարվողականության ազգային ծրագրի 2021-2030թթ. համար» (ՀԱԾ) մշակման հիմքն է:</p> <p>2. ՀԱԾ-ի գործընթացի հիմնական նպատակն է՝ նպաստել Հայաստանում կլիմայի ռիսկերի նվազեցմանը և կառավարմանը՝ դիմակայելով կլիմայի փոփոխության ազդեցությանը, օգտվելով ի հայտ եկող հնարավորություններից, խուսափելով կորուստներից և վնասներից ու կառուցելով այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան բնական, մարդկային, արտադրական և ենթակառուցվածքային համակարգերում հարմարվողականության ապահովմանը: Հարմարվողականության գործողությունների համար կսահմանվեն առաջնահերթություններ՝ ելնելով կլիմայի փոփոխության նկատմամբ տարբեր ոլորտների խոցելիության աստիճանից.</p> <ul style="list-style-type: none"> – բնական էկոհամակարգեր (ջրային և ցամաքային, ներառյալ անտառային էկոհամակարգեր, կենսաբազմազանություն և հողածածկույթ) – մարդու առողջություն – ջրային ռեսուրսների կառավարում
--	--	---

		<ul style="list-style-type: none"> - գյուղատնտեսություն, ներառյալ ձկնաբուծություն և անտառային տնտեսություն - էներգետիկա - Բնակավայրեր և ենթակառուցվածքներ - զբոսաշրջություն: <p>3. Հայաստանի Հանրապետությունը ընդունում է կլիմայի փոփոխությունների հարմարվողականության էկոհամակարգային մոտեցումը: Էկոհամակարգային մոտեցումը համահունչ է երկրի բնապահպանական քաղաքականությանը, որը կապակցված է երկրի՝ մինչև 2050 թ. երկարաժամկետ ռազմավարությանը և Հայաստանի զարգացման առաջնահերթություններին:</p> <p>4. Հարմարվողականության էկոհամակարգային մոտեցումն ակնկալվում է ընդգրկել յուրաքանչյուր ոլորտի քաղաքականության կառուցվածքում, ինչպես արտացոլված է ոլորտային հարմարվողականության ծրագրերում: Սա հնարավորություն է ընձեռում ոլորտային և տեղական մակարդակում իրականացվող գործողություններում ներառել այնպիսի քաղաքականություն և մեխանիզմներ, որոնք նպաստում են կենսաբազմազանության և էկոհամակարգերի սպասարկման բարելավմանը, եկամուտների ստեղծմանը, աղքատության կրճատմանը, ենթակառուցվածքների հարմարվողական զարգացմանը կամ դիմակայունությանը և ածխածնային արտանետումների մեղմման հարակից օգուտների ստացմանը՝ կլիմայի փոփոխության հարցում երկրի ընդհանուր խոցելիության նվազեցման նպատակով:</p> <p>5. ՀԱԾ-ն պարբերաբար վերանայվելու և թարմացվելու է 5-ամյա փուլերով՝ Ազգային հաղորդակցության վերանայումներին զուգահեռ, Կոնվենցիայով և Փարիզյան համաձայնագրով նախատեսված հարմարվողականության վերաբերյալ հաղորդագրությունների ներկայացման և համապատասխան Չափման հաշվետվողականության և հավաստագրման գործընթացներին զուգընթաց՝ ապահովելու անհրաժեշտ տեղեկատվություն քաղաքականության և միջոցառումների իրականացման և ձեռքբերումների վերաբերյալ:</p>
<p>ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՄԱՐԴԱԾԻՆ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱՋԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԸՍՏ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ</p>		
13.	<p>Ենթադրություններ և մեթոդաբանական</p>	<ul style="list-style-type: none"> • Արտանետումների գնահատման կիրառված մեթոդաբանությունը հիմնված է Կլիմայի փոփոխության փորձագետների

	<p>մոտեցումներ, որոնք օգտագործվել են մարդածին ՋԳ արտանետումների հաշվառման և վերացման համար, համաձայն Կողմի ԱՍԳ-ի</p>	<p>միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ) 2006թ. ջերմոցային գազերի գույքագրման ազգային հաշվետվությունների ուղեցույցերի վրա:</p> <ul style="list-style-type: none"> • ԿՓՓՄԽ-ի 2006թ. գույքագրման ծրագրակազմը, օգտագործվել է տվյալների մուտքագրման, արտանետումների հաշվարկման, արդյունքների վերլուծության և եզրակացությունների համար: • Գլոբալ տաքացման ներուժը (GWP, ԳՏՆ) օգտագործվել է 100 տարվա ժամանակային սանդղակով՝ համաձայն ԿՓՓՄԽ-ի գնահատման 2-րդ զեկույցի (1995թ. ԿՓՓՄԽ ԳՏՆ արժեքներ), որի հիման վրա CH₄, N₂O, F-գազերի արտանետումները փոխարկվել են CO₂ <small>համ.</small> -ի: • ՋԳ արտանետումները և կլանումները գնահատվել են ԿՓՓՄԽ-ի 2006թ. ուղեցույցերով սահմանված 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի մեթոդաբանությամբ: Հիմնական աղբյուրների դեպքում կիրառվել են առավելապես 2-րդ և 3-րդ կարգի մեթոդաբանությունները: 3-րդ կարգի մեթոդաբանությունը օգտագործվել է էլեկտրաէներգիայի և ցեմենտի արտադրությունից գոյացող CO₂ արտանետումները գնահատելու համար: 2-րդ կարգի մեթոդաբանությունը օգտագործվել է բնական գազի ստացիոնար և շարժական այրման, բնական գազի փախուստային CH₄ արտանետումների, սառեցման և օդորակման գործունեությունից ՀՖԱ-ների արտանետումների (մեթոդ 2Ա.), գյուղատնտեսական կենդանիների աղիքային խմորումից, խոշոր եղջերավոր կենդանիների, գոմեշների և ոչխարների գոմաղբի կառավարման արդյունքում գոյացող CH₄ արտանետումները, և անտառային հողեր մնացած հողեր կատեգորիայից CO₂-ի գուտ կլանման և կոշտ թափոնների ոչնչացումից CH₄ արտանետումների գնահատման համար: • ԱԿՀ 2017-ում ներկայացված են յուրաքանչյուր կատեգորիայի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ, ներառյալ արտանետումների մասնաբաժինները, մեթոդաբանությունը, տվյալների աղբյուրները, անորոշության գնահատումը, համասեռ ժամանակային շարքերի, որակի ստուգման/որակի ապահովման գործընթացները, տվյալների աղբյուրից կախված վերահաշվարկման առաջարկությունները և պլանավորված բարելավումները:
14.	<p>Թափանցիկություն</p>	<p>Մեղմման և հարմարվողականության գործողությունների թափանցիկությունը կապահովվի հետևյալ միջոցներով.</p> <p>1) Ազգային Չափման հաշվետվողականության և հավաստագրման համակարգի ներդրում՝ Փարիզյան համաձայնագրի</p>

		<p>13-րդ հոդվածում նշված գործողությունների և աջակցության թափանցիկության շրջանակի ապահովման եղանակների, ընթացակարգերի և ուղեցույցերի արտացոլման նպատակով (որոշում թիվ 18/CMA.1):</p> <p>2) Ջերմոցային գազերի արտանետումների ազգային կադաստրի մշակում երկամյա պարբերականությամբ:</p> <p>3) Ազգային հաղորդագրությունների և երկամյա առաջընթացի զեկույցների /երկամյա թափանցիկության զեկույցների մշակում և ներկայացում ՄԱԿ-ի ԿՓՇԿ քարտուղարություն (2024թ.-ից):</p> <p>4) ԱՄԳ վերանայման ընթացքում մասնակցային գործընթացի և հաջորդ ԱՄԳ-ների պատրաստման ընթացքում հանրային քննարկումների մեխանիզմի պահպանում՝ զենդեր-պատասխանատու մոտեցմամբ:</p> <p>5) Բաց և հասանելի տեղեկատվության համակարգի ապահովում՝ հանրային ծառայություն մատուցողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության ամրապնդման միջոցով:</p>
--	--	---

ԻՆՉՈՒՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՈՒՄ, ՈՐ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱՅԻ Է ԵՎ ՀԱՎԱԿՆՈՏ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15.	<p>Որքանո՞վ է Հայաստանի Հանրապետության Ազգային մակարդակում սահմանված ներդրումը արդարացի և հավակնոտ՝ հաշվի առնելով ազգային պայմանները:</p>	<ul style="list-style-type: none"> • 2020թ. ԱՄԳ-ի թիրախը, 2015թ. ԱՄԳ-ի համեմատ, համապատասխանեցվել է երկրի ՋԳ արտանետումների և կարողությունների վերաբերյալ վերջին տվյալներին՝ ելնելով 10-ամյա ժամանակահատվածի, որը ներդաշնակեցվել է Փարիզյան համաձայնագրի Կողմերի մեծ մասի սահմանած ժամանակացույցին, ինչպես նաև՝ համահունչ է գլոբալ գույքագրման նախապատրաստական աշխատանքներին: • Ներկայումս Հայաստանի արտանետումները կազմում են գլոբալ արտանետումների ընդհանուր ծավալի 0.02%-ից ցածր մասնաբաժինը: • 1993թ. ՀՆԱ-ն 1990թ. համեմատ գրանցել է 53.1%-ի անկում, ինչը պայմանավորված էր Խորհրդային Միության շրջանակներում գործող տնտեսական համակարգի փլուզմամբ: 1994թ. հետո ՀՆԱ-ի աճը վերականգնվել է: 1994-2018թթ. ընկած ժամանակահատվածում միջին աճը կազմել է 6.2%, բացառությամբ 2009թ., երբ ՀՆԱ-ն նվազեց 14.1% -ով: • Տնտեսության վերականգնումը Հայաստանում ուղեկցվել է ցածր աճի աճնային զարգացման ուղղությամբ զգալի առաջընթացով: 2017 թվականին 1990 թվականի համեմատ ՋԳ արտանետումները միավոր ՀՆԱ-ի հաշվով (2010թ.
-----	--	--

		<p>կայուն գներով) նվազել են 4.7 անգամ՝ կազմելով 0.86 Գգ CO2համ./մլն ԱՄՆ դոլար: ՀՆԱ էներգատարությունը 2017 թվականին 1990 թվականի համեմատ նույնպես նվազել է 4.7 անգամ՝ կազմելով 0.27 տն.հ./1000 դոլար: Սա արդյունք է տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, վերականգնվող էներգիայի աղբյուրների լայն օգտագործման, ցածր ածխածնային տեխնոլոգիաների կիրառման էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման, որոնք Հայաստանի ցածր արտանետումներով զարգացման միտումների վկայություններ են⁴:</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանը պլանավորում է շարունակել զարգանալ որպես ցածր ածխածնային, ժամանակակից տնտեսություն և նպաստել Կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի երկարաժամկետ գլոբալ նպատակի իրագործմանը՝ իր հնարավորությունների և համապատասխան կարողությունների չափով:
16.	<p>Ինչպե՞ս է Ազգային մակարդակով սահմանված գործողությունը/ ներդրումը նպաստում Կոնվենցիայի նպատակի իրագործմանը, որը սահմանված է Հոդված 2-ում</p>	<p>Հայաստանի Հանրապետության ԱՍԳ ձևակերպվել է այն ենթադրությամբ, որ այն հնարավորություն կտա</p> <ol style="list-style-type: none"> 1) Պահպանել գլոբալ միջին ջերմաստիճանի աճը մինչ-արդյունաբերական մակարդակից բարձր 2°C-ից զգալիորեն ցածր մակարդակում, և ջանքեր գործադրել ջերմաստիճանի աճը մինչ-արդյունաբերական մակարդակից բարձր 1.5°C-ից չգերազանցելու ուղղությամբ, գիտակցելով, որ այդպիսով հնարավոր է զգալիորեն նվազեցնել կլիմայի փոփոխության ռիսկերը և ազդեցությունները, 2) Հետամուտ լինել Կոնվենցիայի նպատակի իրագործմանը՝ միաժամանակ առաջնորդվելով նրա սկզբունքներով, ներառյալ արդարության և ընդհանուր, բայց տարբերակված պարտականությունների և համապատասխան հնարավորությունների սկզբունքով՝ հաշվի առնելով ազգային առանձնահատուկ պայմանները, 3) Մեղման և հարմարվողականության գործողություններում կիրառել էկոհամակարգային մոտեցում, նախապատվությունը տալով հավասարակշռված և համակցված գործողություններին:

⁴ Տե՛ս ՀՀ 4-րդ Ազգային հաղորդագրությունը ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ «ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

2013թ.-ին Վարչավայում կայացած ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) 19-րդ համաժողովի ժամանակ կողմ հանդիսացող երկրներին կոչ արվեց Փարիզյան համաձայնագրին (ՓՀ) ընդառաջ պատրաստել իրենց Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումները (ԱՄՆԳ): Հայաստանի Հանրապետությունը ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N41 արձանագրային որոշմամբ հաստատված իր ԱՄՆԳ-ն ներկայացրել է Կոնվենցիայի քարտուղարություն 2015թ.-ին: 2016թ. նոյեմբերին՝ ՓՀ-ի ուժի մեջ մտնելուց հետո, երկրների կողմից նախապես ներկայացված ԱՄՆԳ-ները դիտարկվել են որպես երկրների առաջին Ազգային մակարդակով սահմանված գործողությունները/ներդրումները (2015 ԱՄԳ): Այնուամենայնիվ, ԱՄԳ ներդրման առաջին ցիկլի մեկնարկային տարին 2021թ. է, ինչը ժամանակ է ապահովել երկրների համար՝ նախքան ԱՄԳ մեկնարկը նախանշելու իրագործման շրջանակները և վերանայելու իրենց սկզբնական ԱՄՆԳ-ները:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո Կողմերն իրականացրել են զլոբալ գույքագրում 2017թ. և 2018 թ. (Talanoa երկխոսություն): Արդյունքում, 2019թ. Մադրիդում կայացած Կոնվենցիայի կողմերի 25-րդ համաժողովին (ԿՀ25) երկրների կողմից ներկայացվել են ՓՀ-ի ներքո գործողությունների հավակնությունների մեծացման դիրքորոշումները: Դրան նախորդել էին բարձր մակարդակի քաղաքական հռչակումները, ինչպես, օրինակ, 2019թ. սեպտեմբերին տեղի ունեցած ՄԱԿ-ի Կլիմայի գործողությունների գագաթնաժողովը, որտեղ շատ պետությունների առաջնորդներ և կառավարությունների ղեկավարներ հայտարարել են իրենց 2015թ. ԱՄԳ-ն 2020թ. վերանայելու կամ կատարելագործելու մտադրության մասին: ԱՄԳ վերանայման համար հիմք հանդիսացող պատճառները բազմազան են: Դրանց թվում կարող են լինել, մասնավորապես, հավակնությունների մեծացման վերաբերյալ քաղաքական հռչակումները, կամ Կատվիցեուս ԿՀ24-ի ընթացքում ընդունված ԱՄԳ ուղեցույցերին հետևելու պատրաստակամությունը, կամ ելակետային տվյալների վերանայման անհրաժեշտությունը, որոնք կարող են փոփոխված լինել 2015թ.-ից հետո: Համապատասխանության գծով ծախսեր կամ տուգանքներ նախատեսված չեն: Երկրները պետք է ինքնուրույն որոշում կայացնեն, վերանայել արդյոք իրենց ԱՄԳ-ն՝ հաշվի առնելով միջազգային ասպարեզում իրենց հեղինակության գործոնը:

Հայաստանի համար 2020թ.-ին ԱՄԳ-ի վերանայումը հնարավորություն է հաջորդող բանակցությունների համաձայնեցված արդյունքների հետ այն ներդաշնակեցնելու և 2015թ. ներկայացրած փաստաթղթի լրամշակման և հստակեցման համար:

2020թ. վերանայումն առաջինն է ապագա փուլերում նախատեսված հերթական վերանայումների և լրամշակումների շարքում: Յուրաքանչյուր հաջորդ ԱՄԳ պետք է «առաջընթաց

ենթադրի» և «արտացոլի հնարավոր առավել բարձր հավակնությունը»: ԱՍԳ ներկայացման յուրաքանչյուր փուլին հաջորդելու է 5 տարին մեկ անգամ իրականացվող գլոբալ գույքագրումը, որից հետո երկրներին առաջարկվելու է վերաներկայացնել իրենց ԱՍԳ-ները, կամ մշակել նոր ԱՍԳ՝ վերջին գլոբալ գույքագրման միջոցով արձանագրված արդյունքների և կատարված առաջարկությունների արտացոլմամբ, և գիտական արդի ձեռքբերումներին համահունչ:

Հայաստանի առաջին ԱՍԳ-ն ուներ 35 տարվա ժամկետ՝ 2015-2050թթ.: Նախևառաջ անհրաժեշտ է վերանայել իրականացման ժամկետի մեկնարկային ամսաթիվը: Փարիզյան համաձայնագրի ներքո ԱՍԳ-ի իրականացումը մեկնարկում է 2021թ.: Հետևաբար, 2015-2020թթ. ժամանակահատվածը կարող է համարվել որպես ներքին նախապատրաստական ժամանակաշրջան: 2020թ. ԱՍԳ-ի վերանայումը նաև հնարավորություն է ընձեռում Հայաստանի ԱՍԳ ժամկետները ներդաշնակեցնել երկրների մեծամասնության, այդ թվում՝ ԵՄ-ի և նրա անդամ պետությունների համար սահմանված ժամկետներին, այն է՝ 10 տարի՝ 2021-2030թթ.:

Ստորագրելով Փարիզյան համաձայնագիրը՝ ՄԱԿ ԿՓՇԿ Կողմերը նաև պայմանավորվել են ՄԱԿ ԿՓՇԿ քարտուղարությանը մինչև 2020թ.⁵ ներկայացնել ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունները (ԵԺՌ): Հայաստանի 2015թ. ԱՍԳ ժամկետը 2015-2050թթ. է, և Հայաստանի 2015թ. ԱՍԳ-ով մինչև 2050 թ. համար սահմանված նպատակը պետք է համահունչ լինի երկրի ԵԺՌ-ին, այսինքն՝ 2050 թ. համար հայտարարված նպատակը ենթակա չէ չեղարկման:

2015թ. ԱՍԳ վերանայման ևս մեկ փաստարկ է նաև այն, որ ՄԱԿ ԿՓՇԿ կողմից այս ընթացքում Կատովիցեում 2018թ. կայացած Կ224 ընթացքում հաստատվել է ԱՍԳ պատրաստման համար նախատեսված ուղեցույցը: 4/CMA.1 որոշման I հավելվածը պարունակում է ԱՍԳ պատրաստման համար ուղեցույց հանդիսացող բնութագրերի ցանկ, որից երկրները կարող են օգտվել ԱՍԳ իրենց վերանայումը պատրաստելու ընթացքում:

Կատովիցեում ընդունված 4/CMA.1 որոշման տեքստը պարունակում է մանրամասն պահանջներ ԱՍԳ առնչությամբ հաղորդակցությունների և առաջընթացի արձանագրման վերաբերյալ, որոնք կիրառելի են բոլոր Կողմերի համար:

Եվս մեկ փաստարկ, որը հիմնավորում է ներկայիս ԱՍԳ վերանայման անհրաժեշտությունը, կայանում է նրանում, որ Հայաստանի 2015թ. ԱՍԳ մեջ պարունակվող տեղեկատվությունը և տվյալները պետք է թարմացվեն՝ վերջին Ազգային հաղորդագրության և Երկամյա առաջընթացի հաշվետվության, ինչպես նաև ջերմոցային գազերի վերջին հասանելի ազգային գույքագրման արդյունքները արտացոլելու նպատակով:

Վերջապես, անհրաժեշտ է հաշվի առնել առաջարկվող մեթոդաբանությունը և այն 2021-2030թթ. ժամանակահատվածի համար իրագործելի միջնաժամկետ նպատակների վերափոխելու եղանակները:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Վերոնշյալ խնդիրները հասցեագրելու նպատակով՝ ներկայացված նախագծով առաջարկվել է.

⁵ Փարիզյան համաձայնագրի հոդված 4, պարբերություն 19:

- 1) Դիտարկել արտանետումների նվազեցման բացարձակ՝ մեկ տարվա թիրախի օգտագործումը՝ 1990թ. ելակետով: 1990թ. արտանետումների մակարդակը օգտագործվում է որպես հղումային ելակետ շատ երկրներում. Ռուսաստանի Դաշնությունը, ԵՄ-ն օգտագործում են և շարունակելու են օգտագործել 1990թ.-ի ելակետը:
- 2) ՀՀ առաջին ԱՍԳ 35-ամյա ժամանակաշրջանը կրճատել մինչև 10 տարի՝ 2015-2050թթ. փոխարեն դիտարկելով 2021-2030թթ., ներդաշնակեցնելով ժամկետները մեծամասնություն կազմող ԱՍԳ ժամկետների հետ: Այս պարագայում 10 տարվա ընթացքում իրականացվելիք գործողություններն ավելի հեշտ կլիմայի պլանավորել, իրականացնել և դրանց մասին հաշվետվություն ներկայացնել: 2023թ. գլոբալ գույքագրումից հետո 2025թ., ԱՍԳ վերանայման հաջորդ փուլում, 2030թ. թիրախը կարող է բարձրացվել, սակայն չի կարող իջեցվել:
- 3) Սահմանել, որ մինչև 2030թ. իրագործման ենթակա մեղմման նոր նպատակը համարժեք է 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ 40 տոկոսով նվազեցման:
- 4) Մինչև 2050թ. մեղմման իր նպատակը, այն է՝ ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների նվազեցում առավելագույնը 2.07 տ CO₂ համ. մեկ շնչի հաշվով, արտահայտել երկարա-ժամկետ, ցածր արտանետումներով զարգացման ռազմավարությունում (ԵԺՌ-ՑԱԶՌ):
- 5) Օգտագործել 4/CMA.1 որոշման I հավելվածում պարունակվող ուղեցույցը որպես ԱՍԳ կառուցվածքի և բովանդակության նմուշային նախագիծ: Հստակության, թափանցիկության և ընկալելիության մեծացման առումով և օգտագործելով 4/CMA.1 որոշման մեջ պարունակվող ցուցումները և բնութագրերի ցանկը:
- 6) Ապահովել հակիրճություն՝ հղումներ կատարելով ոլորտային ռազմավարություններին և ծրագրերին, վերջին մատչելի Երկամյա առաջընթացի զեկույցին (BUR, ԵԱԶ), Ազգային հաղորդագրությանը (NC, ԱՀ), Ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվությանը (NIR, ԱԳՀ), ԵԺՌ և ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման ռազմավարություններին (LEDS, ՑԱԶՌ) կամ դրանց նախագծերին՝ ապահովելու վերջին տվյալների և ցուցանիշների հասանելիությունը, որոնք շահագրգիռ փորձագետների և լայն հասարակության կողմից հեշտությամբ հնարավոր է ստուգել:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ « ԵՄ-ն կլիմայի համար» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի աջակցությամբ, ինչպես նաև ՄԱԶԾ կողմից ներգրավված տեղական և միջազգային փորձագետների մասնակցությամբ:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառության պատշաճ իրականացումը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ «ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները» հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտ ընդունելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ «ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները» հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազում չի ակնկալվում: